ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №9
«23» փետրվարի 2026թ. № ՇՄՆ-COP17-26/01 պայմանագրի

ք.Երևան «06» «08» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ Արկադի Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Սիմոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.2, 2.4.1, 2.2.4 և 7.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագիրը լրացնել՝

1.1.1. «COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների ապահովման և երթևեկության կազմակերպման» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նկարագրով (տեխնիկական բնութագիր)՝ համաձայն Հավելված №1-ի,

1.1.2. «COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների ապահովման և երթևեկության կազմակերպման» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նախահաշիվը՝ համաձայն Հավելված №2-ի,

1.1.3. վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն Հավելված №3-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Կատարողը պարտավոր է Համաձայնագրի կատարման նպատակով կնքված պայմանագրերի կամ համաձայանագրերի և հաշիվ-ապրանքագրերի կամ երրորդ անձանց կողմից ներկայացված Համաձայնագրով նախատեսված ծառայությունների կամ աշխատանքների գնագոյացմանը վերաբերող այլ փաստաթղթերի պատճեն դրանք կնքելուց կամ հաստատելուց կամ ստանալուց հետո 25 (քսանհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Պատվիրատուին:

2.3. Պատվիրատուին տրամադրել Պայմանագրի 2.3.2 կետով նախատեսված «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի համաձայնությունը (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ստանալու դեպքում)՝ Ծառայության մատուցման փուլային նկարագրի ու հանձնման-ընդունման արձանագրության վերաբերյալ:

2.4. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման նպատակով պարտավորություններ է ստանձնել երրորդ անձանց առջև սակայն Պատվիրատուի գործողությունների կամ անգործության հետևանքով կամ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը կամ Համաձայնագիրը դադարեցնելու կամ չեղարկելու հետևանքով երրորդ անձանց առջև առաջանում են նրանց հետ կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորություններ ապա Պատվիրատուի կողմից այդ պարտավորություններն ամբողջ ծավալով ենթակա են հատուցման՝ Կատարողի կողմից հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու ինչպես նաև ստանձնած պարտավորությունների շրջանակում սեփականության իրավունքով ձեռք բերված բոլոր նյութական արժեքները (առկայության դեպքում) և արդյունքային ցուցանիշները Պատվիրատուին հանձնելու դեպքում:

2.5. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման ընթացքում հրաժարվում է այն կատարելուց ապա Կատարողը պարտավոր է վճարել Պատվիրատուին Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը ինչպես նաև հատուցել Համաձայնագրի 1.1.2 կետով սահմանված գնման առարկան այլ անձանցից ձեռքբերման դեպքում գների դրական տարբերությունը: Սույն կետով նախատեսված դեպքերում Կողմերը կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ որով.

ա) Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում իսկ Պատվիրատուն ընդունում է մինչ հրաժարման կամ լուծման պահը Համաձայնագրի արդյունքները,

բ) Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին վերադարձնել Համաձայնագրի շրջանակում կատարված բոլոր վճարումները եթե դրանք չեն ծածկում փոխադարձ հաշվարկների ակտով կատարված ծախսերը:

2.6. Կանխավճարը մարվում է մինչև Համաձայնագրով նախատեսված ծառայությունների ավարտը՝ Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կարգով՝ հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպմամբ:

2.7. Համաձայնագրի Հավելված №2-ի «2. Չնախատեսված ծախսեր» տողով նախատեսված միջոցները կարող են օգտագործվել միայն փաստացի առաջացած ծախսերի ֆինանսավորման նպատակով և այդ մասով կանխավճար չի հատկացվում: Ընդ որում, այդ ծախսերի իրականացման համար Պատվիրատուի նախնական համաձայնեցումը պարտադիր է: Պատվիրատուն սույն կետով նախատեսված համաձայնությունը կամ մերժումը հայտնում է Կատարողին 1 (մեկ) օրվա ընթացքում: Միջոցառման կազմակերպման և իրականացման ընթացքում Համաձայնագրի Հավելված №2-ի «1.6. Միկրովտոբուսներով տեղափոխման կազմակերպում և կառավարում» ծառայության դիմաց վճարումը կկատարվի ըստ օգտագործման անհրաժեշտության և այդ մասով կանխավճար չի հատկացվում:

2.8. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածներ 1-ը, 2-ը և 3-ը համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

2.9. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագրով նախատեսված ֆինանսական միջոցների հատկացման մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրը:

3. Կողմերի հասցեները բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ**
ք.Երևան Կառավարական տուն 3	ք.Երևան Նալբանդյան 25 ա բն. 58
ՖՆ գործառնական վարչություն	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011066439	ՀՀ 1660030207649200
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02893152
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ	«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի տնօրեն
Ա.Խաչատրյան	***Հ.Սիմոնյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«06» «08» 2026թ. կնքված
համաձայնագիր №9
« 23 » « փետրվարի » 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ	«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի տնօրեն
Ա.Խաչատրյան	***Հ.Սիմոնյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՒԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների ապահովման և երթևեկության կազմակերպման փուլային ծառայությունների
(ըստ «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի ներկայացրած չափանիշների)

Մատուցման ենթակա ծառայության սույն նկարագիրը մշակվել է Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.1 կետի և Հավելված 1.1-ի 2-րդ կետի 11-րդ պարբերության կատարումն ապահովելու նպատակով:

Ամփոփագիր

2026 թվականին Հայաստանը կհյուրընկալի ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը՝ միջազգային նշանակության բարձր մակարդակի միջոցառում, որը կմիավորի տարբեր պետությունների, միջազգային կառույցների, գիտական շրջանակների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: Համաժողովի անցկացումը կարևոր հնարավորություն է Հայաստանի համար՝ հանդես գալու որպես բնապահպանական գլոբալ օրակարգում ակտիվ ներգրավված և պատասխանատու գործընկեր:

Նպատակ

Ծրագրի հիմնական նպատակն է COP17 համաժողովի շրջանակում մասնակիցների, պատվիրակությունների, անձնակազմի և սպասարկող խմբերի անվտանգ, ժամանակին և համակարգված տեղափոխման ապահովումը՝ միջոցառման բոլոր փուլերի ընթացքում

Տրանսպորտային ապահովման անհրաժեշտությունը պայմանավորված է միջոցառման մասշտաբով, մասնակիցների և ներգրավված անձնակազմի մեծ թվով, ինչպես նաև տարբեր գործառնական գոտիների միջև անընդհատ և համակարգված փոխադրումների ապահովման պահանջով:

Տրանսպորտային ապահովման գործառնական անհրաժեշտությունը

- **Միջոցառման մասշտաբ**

Միջոցառման կազմակերպման և իրականացման ընթացքում ներգրավված են լինելու ավելի քան 15000 անձ, այդ թվում՝ մեծ թվով մասնակիցներ, կազմակերպչական անձնակազմ և տեխնիկական թիմեր: Միջոցառման մասշտաբը ենթադրում է մարդկային հոսքերի բարձր ինտենսիվություն, ինտենսիվ գործառնական շրջանառություն և տրանսպորտային միջոցների շարունակական կիրառման անհրաժեշտություն: Ներգրավված մարդկային ռեսուրսների մեծ ծավալը պահանջում է տարբեր ուղղություններով պարբերական և ժամանակին տեղափոխումների ապահովում՝ բացառելու ուշացումները, կուտակումները և գործառնական խափանումները:

- **Տարածքների բաշխվածություն և հեռավորություն**

Տարածքների բաշխվածությունը պայմանավորված է միջոցառման մասշտաբով և մասնակիցների մեծ քանակով, որի շրջանակում նախատեսվում է ավելի քան 15000 մասնակցի տեղաբաշխում տարբեր հյուրանոցներում և կեցության վայրերում: Մասնակիցների, անձնակազմի և հյուրերի տեղակայումը

իրականացվելու է ինչպես Երևանի տարբեր վարչական հատվածներում, այնպես էլ մայրաքաղաքին հարակից քաղաքներում և բնակավայրերում՝ առկա հյուրանոցային ֆոնդի և տեղավորման հնարավորությունների բաշխվածությունից ելնելով:

Նշված հանգամանքը առաջացնում է մասնակիցների և պատվիրակությունների շարունակական և համակարգված տեղափոխման անհրաժեշտություն՝ դեպի միջոցառման հիմնական վայր նախատեսված երթուղիներով, ինչպես նաև օդանավակայանի, հյուրանոցների և միջոցառման հիմնական վայրերի միջև:

• Օրական և պիկ ժամերի հոսքեր

Միջոցառման ընթացքում ակնկալվում է բարձր ինտենսիվության մասնակիցների մեծ հոսք, հետևաբար նախատեսվում է տրանսպորտային միջոցների շահագործում վաղ առավոտից մինչև ուշ գիշեր: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հատկապես առավոտյան և երեկոյան պիկ ժամերին, երբ իրականացվելու են մասնակիցների և հյուրերի զանգվածային տեղափոխումներ նախատեսված երթուղիներով: Բացի հիմնական գրաֆիկային համապատասխան տեղաշարժերից, օրվա ընթացքում նախատեսվում են նաև լրացուցիչ սպասարկման տեղափոխումներ, ինչը պահանջում է ավտոբուսների և միկրոավտոբուսների մշտական հասանելիություն և համակարգված շահագործում:

• Միաժամանակ տեղափոխվող մարդկանց ծավալ

Տրանսպորտային միջոցների քանակը հաշվարկվել է **տրամադրված ժամանակացույցի և յուրաքանչյուր ժամանակային հատվածի համար նախատեսված մասնակիցների հոսքերի հիման վրա**:

Պահուստային տրանսպորտային միջոցների անհրաժեշտություն

Միջոցառման լայնածավալ բնույթը և բարձր ինտենսիվությամբ շահագործվող տրանսպորտային համակարգը պահանջում են պահուստային ավտոբուսների և միկրոավտոբուսների առկայություն: Դրանք անհրաժեշտ են տեխնիկական խափանումների, երթևեկային սահմանափակումների, եղանակային պայմանների փոփոխության, ժամանակացույցի շեղումների, անվտանգության կամ այլ անկանխատեսելի իրավիճակների դեպքում՝ մարդկանց արագ վերաբաշխում, այլընտրանքային երթուղիներով տեղափոխում և փոխադրումների անընդհատությունն ապահովելու նպատակով:

Միջոցառման հիմնական վայր մուտքն ու ելքը կազմակերպվելու են կենտրոնացված սկզբունքով՝ վերահսկվող և միասնական անցակետի միջոցով, ինչը պայմանավորված է անվտանգության, հոսքերի կառավարման և չարտոնված մուտքերի բացառման անհրաժեշտությամբ: Մասնակիցների և հյուրերի հիմնական տեղափոխման drop-off / pick-up գոտին նախատեսվում է կազմակերպել «Մերիդիան» համալիրի հարակից հատվածում, որտեղ իրականացվելու է ավտոբուսների և միկրոավտոբուսների հիմնական կանգառը և ուղևորահոսքի բաշխումը:

Տրանսպորտային միջոցների շարժը նախատեսվում է շրջանաձև երթևեկության սկզբունքով՝ հիմնական մուտքի դիմացի հատվածում, ինչը հնարավորություն կտա ապահովել անընդհատ հոսք, նվազեցնել կանգառների տևողությունը և բացառել կուտակումներն ու երթևեկային խցանումները: Նման կազմակերպումը հատկապես կարևոր է մարդկանց մեծ հոսքի պայմաններում, երբ անհրաժեշտ է միաժամանակ ապահովել անվտանգության վերահսկում և գործառնական արդյունավետություն:

Տրանսպորտային միջոցների կազմը և շահագործումը նախատեսվում է շարունակական և բազմափուլ ռեժիմով՝ ամբողջ միջոցառման ընթացքում: Շարունակական շրջանառությունը անհրաժեշտ է ինչպես մասնակիցների և խմբերի տեղափոխման, այնպես էլ հատուկ նշանակության անձնակազմի աշխատանքը անխափան ապահովելու նպատակով:

Տրանսպորտային միջոցները պետք է լինեն պատշաճ մաքրության, արտաքին տեսքով, օդափոխության և ջեռուցման համակարգի առկայությամբ, վարորդները պետք է ունենան պատշաճ և ներկայանալի արտաքին տեսք:

Նախատեսվող տրանսպորտային միջոցների ցանկ՝

Պատվիրակությունների փոխադրման համար նախատեսված ավտոբուսներ (քաղաքապետարանի կողմից տրամադրվող)

- Քանակ՝ 30
- Տևողություն՝ 06:00 - 21:00 15 օր

Պատվիրակությունների փոխադրման համար նախատեսված վարձակալվող ավտոբուսներ

- Քանակ՝ 40
- Տևողություն՝ 06:00 - 21:00 15 օր

Գիշերային հերթափոխի համար նախատեսված ավտոբուսներ՝

- Քանակ՝ 20
- Տևողություն՝ 21.00 – 1.00, 15 օր երկրորդ վարորդի պարտադիր ներգրավմամբ

Աշխատակազմի փոխադրման համար նախատեսված ավտոբուսներ (AV1)

- Քանակ՝ 1
- Տևողություն՝ 31 օր

Աշխատակազմի փոխադրման համար նախատեսված ավտոբուսներ (AV2)

- Քանակ՝ 3
- Տևողություն՝ 41 օր

Թարգմանիչների փոխադրման համար նախատեսված ավտոբուս

- Քանակ՝ 1
- Տևողություն՝ 16 օր

ՄԱԿ անվտանգության աշխատակազմի փոխադրման համար նախատեսված ավտոբուս

- Քանակ՝ 1
- Տևողություն՝ 25 օր

Միկրոավտոբուսներ

CBD քարտուղարության համար նախատեսված միկրոավտոբուս (Minivan)

- Քանակ՝ 1
- Տևողություն՝ 22 օր

Մարդատար ավտոմեքենաներ

CBD քարտուղարության համար նախատեսված մարդատար ավտոմեքենաներ (Toyota Camry)

- Քանակ՝ 5
- Տևողություն՝ 22 օր

Օդանավակայանային փոխադրումներ

Օդանավակայանային փոխադրումների համար նախատեսված տրանսպորտային միջոցներ (17.10–18.10)

- Քանակ՝ 14
- Տևողություն՝ 2 օր

Օդանավակայանային փոխադրումների համար նախատեսված տրանսպորտային միջոցներ (19.10–20.10, 30.10–01.11)

- Քանակ՝ 10
- Տևողություն՝ 5 օր

Կապույտ զոնայից /Մերիդիան էքսպո կենտրոն/ դեպի կանաչ զոնա /Կարեն Դեմիրճյան մարզահամերգային համալիր/ փոխադրումների համար նախատեսված տրանսպորտային միջոցներ (19.10–20.10, 30.10–01.11)

- Քանակ՝ 1
- Տարողություն՝ 18-20 տեղանոց

Այլ ծախսեր

- Վարորդների սնունդ
- Կայանատեղիների վճար
  14 մեքենա, 2 օր, 18 անգամ = 504
  10 մեքենա, 5 օր, 18 անգամ = 900
- Պահուստային միկրոավտոբուսներ (Sprinter)

Միջոցառման կազմակերպման և իրականացման ընթացքում կարող է առաջանալ անսպասելի լրացուցիչ տրանսպորտային միջոցների անհրաժեշտություն՝ ներառյալ ավտոբուսներ, մինիվեններ և թեթև մարդատար ավտոմեքենաներ: Նման պահանջ կարող է պայմանավորված լինել պատվիրակների գրաֆիկների փոփոխություններով, վերջին րոպեի ժամանումներով կամ մեկնումներով, անվտանգության նկատառումներով, ինչպես նաև մասնակիցների հոսքի տատանումներով:

Միջոցառման կազմակերպման և իրականացման ընթացքում անհրաժեշտ կլինի միկրոավտոբուսներով ուղևորափոխադրումների կազմակերպման և կառավարման ծառայություն՝ մասնակիցների, անձնակազմի, հյուրերի, կամավորների և միջոցառման կազմակերպման գործընթացում ներգրավված այլ անձանց անվտանգ, հարմարավետ և ժամանակին տեղափոխումն ապահովելու նպատակով: Ծառայությունը պետք է ներառի տեղափոխումների պլանավորում և համակարգում, նախապես համաձայնեցված երթուղիների և ժամանակացույցի համաձայն:

Միջոցառման կազմակերպման և իրականացման ընթացքում, ելնելով կազմակերպչական և գործառնական անհրաժեշտությունից, կարող է առաջանալ նախապես չնախատեսված անսպասելի լրացուցիչ տրանսպորտային միջոցների անհրաժեշտություն՝ մասնակիցների, պատվիրակությունների, հյուրերի և այլ կազմակերպչական կարիքների սպասարկումն ապահովելու նպատակով, որոնց վճարումը կկատարվի ըստ օգտագործման անհրաժեշտության՝ միջոցառման 15 օրերի ընթացքում օրական միջին 10 մեքենայի հաշվարկով:

Ավտոկայանատեղիի ծառայություն

Զվարթնոց օդանավակայանի տարածքում ավտոբուսների կայանումը (պարկինգը) պայմանավորված է ուղևորափոխադրումների կազմակերպման անհրաժեշտությամբ և իրականացվում է ըստ փաստացի պահանջի: Կախված չվերթների ժամանակացույցից, ուղևորահոսքից և սպասարկման գործընթացի առանձնահատկություններից՝ ավտոբուսները որոշակի ժամանակահատվածում պետք է կայանեն օդանավակայանի հատուկ նախատեսված պարկինգում՝ մինչև ուղևորների նստեցման կամ իջեցման գործընթացի մեկնարկը:

Տրանսպորտային ծառայությունների կազմակերպում և գործառնական կառավարում

COP17 համաժողովի տրանսպորտային ապահովումը ներառում է ոչ միայն անհրաժեշտ տրանսպորտային միջոցների ներգրավումը, այլև ամբողջ տրանսպորտային համակարգի կենտրոնացված պլանավորումը, օպերատիվ կառավարումը և շուրջօրյա համակարգումը միջոցառման բոլոր փուլերում:

Ծառայության շրջանակում իրականացվելու են՝

- երթուղիների նախագծում և պարբերական օպտիմալացում՝ հաշվի առնելով մասնակիցների տեղաբաշխումը, միջոցառման ժամանակացույցը և երթևեկության առանձնահատկությունները,
- փոխադրումների ժամանակացույցերի մշակում, թարմացում և օպերատիվ վերանայում՝ միջոցառման ծրագրային փոփոխություններին համապատասխան,
- մասնակիցների, պատվիրակությունների, անձնակազմի և սպասարկող խմբերի տրանսպորտային հոսքերի մշտական համակարգում,
- վարորդների աշխատանքային գրաֆիկների, հերթափոխերի և փոխարինումների կազմակերպում՝ աշխատանքային օրենսդրության և անվտանգության պահանջներին համապատասխան,
- մասնակիցների երթևեկության ապահովում՝ նախապես մշակված երթուղիներով դեպի միջոցառման վայր և հետադարձ ուղղությամբ,
- օդանավակայանային ժամանումների և մեկնումների ամբողջական կառավարում՝ ներառյալ, հանդիպումների և ճանապարհման գործընթացների համակարգումը,
- պահուստային տրանսպորտային միջոցների բաշխման և կիրառման համակարգում՝ արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակներում,
- տրանսպորտային միջոցների տեղաշարժի օպերատիվ վերահսկում, վարորդների հետ շարունակական կապի ապահովում և երթուղիների անհրաժեշտ ճշգրտումների իրականացում,
- տրանսպորտային գործընթացների համակարգում պետական մարմինների, իրավապահ կառույցների, օդանավակայանի, հյուրանոցների և միջոցառման կազմակերպչական թիմերի հետ:

Վերոնշյալ աշխատանքները պահանջում են առանձին գործառնական կառավարման թիմի ներգրավում, մշտական դիսպետչերական համակարգում և շուրջօրյա կոորդինացիա, որոնք հանդիսանում են միջոցառման անվտանգ, ժամանակին և անխափան իրականացման անհրաժեշտ պայման:

Ելնելով վերոնշյալից՝ նախատեսված տրանսպորտային միջոցների քանակը և դրանց շահագործման կազմակերպումը անհրաժեշտ են մասնակիցների ժամանակին և անվտանգ տեղափոխումը, միջոցառման հաստատված ժամանակացույցի պահպանումը, ինչպես նաև գործառնական և անվտանգության ռիսկերի նվազեցումն ապահովելու համար: Տրանսպորտային համակարգի պատշաճ կազմակերպումը նաև ապահովում է գործառնական ճկունություն, արագ արձագանքման հնարավորություն և միջոցառման բոլոր փուլերի համակարգված իրականացում՝ նպաստելով միջոցառման ընդհանուր արդյունավետ և անվտանգ անցկացմանը:

Ներգրավվող մասնագետներ

Տրանսպորտային միջոցների ապահովման և երթևեկության կազմակերպման համար ձևավորվում է բազմապրոֆիլ մասնագիտական թիմ: Թիմը ձևավորվում է ըստ գործառույթների և կարող է ներառել ինչպես հիմնական ներգրավված մասնագետներ, այնպես էլ արտաքին գործընկերների և ենթակապալառուների ռեսուրսներ՝ կախված նախագծի ծավալից և փուլերից:

Տրանսպորտի կազմակերպման ղեկավարներ

Տրանսպորտի մենեջերներ

Սուպերվայզրներ / կոորդինատորներ

Վարորդներ /համաձայն միավոր տրանսպորտի/

Ֆինանսական գնահատական

COP 17 համաժողովի տրանսպորտային միջոցների և երթևեկության կազմակերպման, ինչպես նաև գործառնական կառավարման ծառայությունների իրականացման ընդհանուր բյուջեն կազմում է մինչև 487 177 727 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները):

Հավելված №2
«06» «03» 2026թ. կնքված
համաձայնագիր №9
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների ապահովման և երթևեկության կազմակերպման փուլային ծառայությունների

(ՀՀ դրամ)

h/h	Ծառայության անվանումը	Մանրամասներ	Նկարագրություն	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը (ներառյալ ԱԱՀ)	Ընդհանուր գումարը (ներառյալ ԱԱՀ)
1	**COP 17 համաժողովի տրանսպորտային միջոցների և երթևեկության կազմակերպման ինչպես նաև գործառնական կառավարման ծառայություններ այդ թվում՝**						**457 138 788**
1.1	Ավտոբուսներով տեղափոխման կազմակերպում և կառավարում	Համաժողովի օրերի ընթացքում օրական երթ՝ 80-100 կմ	45-50 ուղևորի համար նախատեսված ավտոբուսներ	ավտոբուս/ օր	600	387 546	232 527 600
1.2	Ավտոբուսներով տեղափոխման կազմակերպում և կառավարում	Աշխ. օրվա ավարտին՝ վարորդների փոփոխությամբ	45-50 ուղևորի համար նախատեսված ավտոբուսներ	ավտոբուս/ օր	300	166 091	49 827 300

1.3	Ավտոբուսներով տեղափոխման կազմակերպում և կառավարում	ԱՎ1 ԱՎ2 ընթացքում	35 ուղևորի համար նախատեսված ավտոբուսներ	ավտոբուս/օր	170	246 240	41 860 800
1.4	Ավտոբուսներով տեղափոխման կազմակերպում և կառավարում	ՄԱԿ անվտանգության համար	45-50 ուղևորի համար նախատեսված ավտոբուսներ	ավտոբուս/օր	25	342 000	8 550 000
1.5	Ավտոբուսներով տեղափոխման կազմակերպում և կառավարում	Տրանսֆեր դեպի օդանավակայան	45-50 ուղևորի համար նախատեսված ավտոբուսներ	ավտոբուս/օր	78	793 440	61 888 320
1.6	Միկրոավտոբուսներով տեղափոխման կազմակերպում և կառավարում	Համաժողովի օրերի ընթացքում տարբեր կարիքների համար	Մերսեդես սպրինտերներ	ավտոբուս/օր	150	218 880	32 832 000
1.7	Մինիվեն մեքենաներով տեղափոխման կազմակերպում և կառավարում			մեքենա/օր	22	177 840	3 912 480
1.8	Մարդատար մեքենաներով տեղափոխման կազմակերպում և կառավարում		Տոյոտա Քեմրի	մեքենա/օր	110	164 160	18 057 600
1.9	Ավտոկայանատեղիի ծառայություն	Զվարթնոց օդանավակայանում ավտոբուսների կայանում		ավտոբուս/օր/անգամ	1 404	5 472	7 682 688
2	Չնախատեսված ծախսեր						30 038 939
ԸՆԴԱՄԵՆԸ							**487 177 727**

Հավելված №3
«06» «08» 2026թ. կնքված
համաձայնագիր №9
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
№ «№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ԴՈՊԻՆԳ ՍՓԵՅՍ ՍՊԸ
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը**	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)**												
			հունվար	**փետրվար**	**մարտ**	**ապրիլ**	**մայիս**	**հունիս**	**հուլիս**	**օգոստոս**	**սեպտեմբեր**	**հոկտեմբեր**	**նոյեմբեր**	**դեկտեմբեր**	**Ընդամենը**
1	79951112	«COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների ապահովման և երթևեկության կազմակերպման» փուլային ծառայություններ	-	-	-	-	-	-	-	381 876 109	381 876 109	381 876 109	487 177 727	487 177 727	**487 177 727**